ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2023

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Գիտելիքների ստուգման թեստը կազմված է 70 առաջադրանքներից, որոնց ընդհանուր միավորը հավասար է 70-ի:

Դրանից ընտրովի առաջադրանքներին բաժին է ընկնում 40 միավոր (40 առաջադրանք), կարճերին՝ 24 միավոր (24 առաջադրանք) և կարճ-վանդակավորներին՝ 6 միավոր (6 առաջադրանք):

Թեստը ներառում է առաջադրանքներ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի հանրակրթական ծրագրերով նախատեսված թեմաներից:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստի կատարման համար հատկացվում է 180 րոպե:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք 1-3-րդ հարցերին:

«Կատրամիդե թագուհին, որը Սյունյաց Վասակ իշխանի դուստրն էր, բարեպաշտուհի լինելով, կառուցեց Սմբատի հիմնադրած եկեղեցին ամենապայծառ վայելչությամբ, որպես բարձրաբերձ կամարներով զմբեթավորված երկնանման խորան և զարդարեց ծիրանածաղիկ, ոսկեթել նկարազարդ գործվածքներով, արծաթե և ոսկե անոթներով, նաև պայծառ լուսատու անոթների բազմությամբ, որով շողում էր երկնակամարում Անիի Սուրբ Կաթողիկեն»:

1 **Ո՞վ է մեջբերված հատվածի հեղինակը.**

1) Արիստակես Լաստիվերցի
2) Մատթեոս Ուռհայեցի
3) Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ
4) Կիրակոս Գանձակեցի

2 **Ո՞ր աշխատությունից է մեջբերված հատվածը.**

1) «Տիեզերական պատմություն»
2) «Հայոց պատմություն»
3) «Ժամանակագրություն»
4) «Պատմություն»

3 **Ու՞մ դուստրն էր թագուհին.**

1) Գագիկ Արծրունի թագավորի
2) Սյունյաց Վասակ իշխանի
3) Սմբատ Բագրատունի իշխանի
4) Տաշիր Զորագետի թագավոր Դավիթ Բագրատունու

Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք 4-6-րդ հարցերին.

«…Պատմում են, որ մինչև կյանքի վերջին րոպեն ձախ ծոցի գրպանում մի թուղթ էր պահում, որից չէր բաժանվում գիշեր-ցերեկ. թե ինչ բովանդակություն ուներ այդ թուղթը, ոչ ոք չգիտեր, որովհետև նա ոչ ոքի ցույց չէր տալիս: Բայց երբ «…» վերադարձավ և մտերիմների հետ խոսք ու զրույց էր լինում Պասկևիչի ու անցած գնացած անցքերի մասին, ծերունի հայրապետը ձեռքը դնում էր ձախ ծոցի վրա և խորին հառաչանքով ասում. «Պասկևիչը ահա այստեղ է կաշկանդված»:

4 **Ո՞վ է մեջբերված հատվածի հեղինակը.**

1) Նորայր Սարուխանյան
2) Ստեփան Կերտող
3) Կյուրեղ Քիպարյան
4) Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան

5 **Ո՞ր կաթողիկոսի մասին է մեջբերված հատվածը.**

1) Մկրտիչ Ա. Խրիմյան
2) Հովհաննես Ը. Կարբեցի
3) Ներսես Ե. Աշտարակեցի
4) Մատթեոս Ա. Կոստանդնուպոլսեցի

6 **Որտեղի՞ց էր վերադարձել կաթողիկոսը.**

1) Բեռլինից
2) Թիֆլիսից
3) Կ.Պոլսից
4) Բեսարաբիայից

7 **Ըստ ռուսական պետական Դումայի պաշտոնյայի հուշերի ո՞վ էր պահանջում, որ հայերը մյուս ժողովուրդների նման երդման արարողությունը կատարեն ռուսերեն.**

«Այն դեպքում, երբ Կովկասում բոլոր մյուս ժողովուրդները երդման արարողությունը կատարում էին ռուսերեն, հայերը անհասկանալի ավանդույթի ուժով պահպանեցին այդ բանը հայերեն անելու իրավունքը: «…» պահանջեց, որպեսզի դադարեցվի դա: Չնայած այդ պահանջը առաջադրվեց միանգամայն կտրուկ ձևով, այն շրջաբերականով հանգուցյալ Մկրտիչ Խրիմյանի իշխանությամբ չեղյալ համարվեց»:

1) Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովը
2) Վարչապետ Պ. Ստոլիպինը
3) Կովկասի կառավարչապետ Գ. Գոլիցինը
4) Ռուսաստանի լուսավորության նախարար Ի.Դելյանովը

Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք 8-րդ և 9-րդ հարցերին.

«Նրա իմաստության համբավը տարածվեց բոլոր ազգերի մեջ. Թեորա անունով մի կոստանդնուպոլսեցի իմաստասեր լսելով սրա հռչակը՝ իր գրքերը բառնալով գրաստների վրա, եկավ փորձելու և վերահասու լինելու նրա իմաստությանը: Եկավ, շատ օրեր զրուցեց նրա հետ ու գտավ ամեն բանի մեջ հմուտ, նաև Սուրբ Հոգով լցված»:

8 **Հայոց ո՞ր նշանավոր կաթողիկոսի մասին է խոսքը.**

1) Մովսես Գ. Տաթևացի
2) Հովհաննես Գ. Օձնեցի
3) Բարսեղ Ա. Անեցի
4) Ներսես Դ. Կլայեցի

9 **Ո՞ր պատմիչի աշխատությունից է մեջբերված հատվածը.**

1) Առաքել Դավրիժեցի
2) Կիրակոս Գանձակեցի
3) Մատթեոս Ուռհայեցի
4) Հովհաննես Ե. Դրասխանակերտցի

Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք 10-րդ և 11-րդ հարցերին.

«Երկրում աճել ու բազմացել էին խաղաղությունը, պտղաբերությունը, առատությունը և գործի հաջողությունը և աստվածային պաշտամունքը... »:

10 **Հայոց ո՞ր արքայի գահակալության ժամանակաշրջանն է բնութագրել պատմիչը.**

1) Գագիկ I
2) Տրդատ III Մեծ
3) Խոսրով III Կոտակ
4) Սմբատ II

11 **Ո՞ր պատմիչի աշխատությունից է մեջբերված հատվածը.**

1) Մատթեոս Ուռհայեցի
2) Փավստոս Բուզանդ
3) Ղազար Փարպեցի
4) Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ

12 **Որտեղի՞ց է մեջբերված հատվածը.**

« ...Հաւատամք եւ ի մի միայն յԸնդհանրական եւ յԱռաքելական Սուրբ Եկեղեցի, ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց, ի յարութիւնն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից հոգւոց եւ մարմնոց, յարքայութիւնն երկնից և ի կեանսն յաւիտենականս»:

1) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Հավատո Հանգանակ
2) Եփրեմ Ասորու «Հոգևոր խրատներ»
3) Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» աղոթագիրք
4) Ղազար Ա. Ջահկեցու «Գիրք աղօթից, որ կոչի Աստուածաղերս»

Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք 13-րդ և 14-րդ հարցերին.

«… Ժողովուրդ ամենեն առաջ քո ազատության հույսը քո վրա դիր, քո խելքին, բազկին ուժ տուր, մարդ ինքն իրմե պետք է աշխատի, որ փրկվի»:

13 **Հայոց ո՞ր կաթողիկոսն է մեջբերված խոսքերի հեղինակը.**

1) Վազգեն Ա. Պալճյան
2) Հովսեփ Ա. Հողոցմեցի
3) Մկրտիչ Ա. Խրիմյան
4) Գևորգ Ե. Սուրենյանց

14 **Նշվածներից ո՞ր կարևոր իրադարձությունն է տեղի ունեցել նրա գահակալության տարիներին.**

1) Սարդարապատի ճակատամարտը
2) Ավարայրի ճակատամարտը
3) Շուշիի ազատագրումը
4) Խանասորի արշավանքը

Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք 15-րդ և 16-րդ հարցերին.

«Միհրանյան տոհմի փառքը գագաթնակետին հասցնողը քրիստոնեություն ընդունած Վարազ Գրիգոր իշխանի երկրորդ որդին էր՝ «…»: Դառնալով Աղվանքի բանակի հրամանատար՝ նա, միաժամանակ, դեռ հոր կենդանության օրոք, իր ձեռքն առավ ամբողջ երկրի կառավարությունը: Իր այդ գործի համար երիտասարդ իշխանը ժողովրդական հերոս դարձավ: … Մուավիա խալիֆը «Արևելքի իշխանին» հանձնեց բոլոր արաբական հողերի կառավարումը մինչև Կովկասի մեծ լեռնաշղթան և մանավանդ հոն-խազարների հետ բարեկամական հարաբերությունների մշակումն ու պահպանումը»:

15 **Ո՞վ է մեջբերված հատվածի հեղինակը.**

1) Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան
2) Լեո
3) Փավստոս Բուզանդ
4) Մովսես Կաղանկատվացի

16 **Ո՞ւմ մասին են հեղինակի խոսքերը.**

1) Ջվանշիր
2) Վաչե
3) Առանշահիկ
4) Վաչագան

Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք 17-րդ և 18-րդ հարցերին.

«Հարման տարիներ ապրելով սերեց Արամին: Արամի մասին պատմում են, թե շատ քաջագործություններ է կատարել հաղթական պատերազմներում և ընդարձակել է Հայաստանի սահմանները բոլոր կողմերից, ում անունով էլ բոլոր ազգերը կոչում են մեր երկիրը, ինչպես հույները՝ Արմեն, իսկ պարսիկներն ու ասորիները՝ … »:

17 **Ո՞ւմ աշխատությունից է մեջբերված հատվածը.**

1) Միքայել Չամչյան
2) Մովսես Խորենացի
3) Փավստոս Բուզանդ
4) Ղազար Փարպեցի

18 **Ըստ հեղինակի՝ ինչպե՞ս են հայերին անվանել պարսիկները և հույները.**

1) Արամե
2) Արմենոս
3) Արմոս
4) Արմենիկ

19 **Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը.**

«Մանկությունից ի վեր ես պատերազմների մեջ եմ մեծացել, ամեն վերք հանձն եմ առել քաջությամբ, և ինչո՞ւ ես բախտ չունեցա պատերազմի մեջ մեռնելու…»:

1) Մանվել Մամիկոնյան
2) Վասակ Մամիկոնյան
3) Վարդան Մամիկոնյան
4) Մուշեղ Մամիկոնյան

Կարդացե՛ք մեջբերված հատվածը և պատասխանե՛ք 20-րդ և 21-րդ հարցերին.

«Նա քաղցր եղանակով գրեց Սուրբ պատարագի քարոզը, նույն խոհականությամբ՝ շարականների տները, իր անվան տառերով երկու գանձեր՝ մեկը «Վարդավառի», մյուսը՝ «Աստվածածնի փոխման»:

20 **Ո՞ւմ աշխատությունից է մեջբերված հատվածը.**

1) Սմբատ Գունդստաբլ
2) Մատթեոս Ուռհայեցի
3) Արիստակես Լաստիվերցի
4) Կիրակոս Գանձակեցի

21 **Ու՞մ մասին է մեջբերված հատվածը.**

1) Ս. Գրիգոր Նարեկացի
2) Ս. Հովան Որոտնեցի
3) Ս. Հովհաննես Գ. Օձնեցի
4) Ս. Ներսես Դ. Կլայեցի

22 **Ո՞վ է մեջբերված խոսքերի հեղինակը.**

« … Մեր պատմության անցյալ դարերը լի են քաջության օրինակներով, ներկված են նահատակների արյամբ: …Դարեր շարունակ հայոց ազգն այսպես է ապրել՝ իր ինքնության համար պայքարելով, իր վաղվա համար այսօր մեռնելով: Դրա համար է, որ զանգվածային կոտորածներով ու մահերով հարուստ մեր կենսագրությունը չի ունեցել և երբեք էլ չպիտի ունենա վերջին վերջակետ»:

1) Արամ Մանուկյան
2) Մկրտիչ Ա. Խրիմյան
3) Գևորգ Ե. Սուրենյանց
4) Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանց

23 **Ո՞ր աղբյուրից է մեջբերված հատվածը.**

«Ամենայն Հայոց Հայրապետության Սուրբ Աթոռից պետք է ընտրվի մի արքեպիսկոպոս, որ մտնի Հայոց տուն, իբրև համայն եկեղեցականների փոխանորդ … »:

1) «Եկեղեցի-պետություն դաշնագիր» փաստաթղթից
2) «Որոգայթ Փառաց» աշխատությունից
3) «Ազգապատում» աշխատությունից
4) «Մտադրությունների հուշագիր» փաստաթղթից

24 **Ո՞ւմ է վերագրվում առավոտյան ժամերգության ժամանակ երգվող հետևյալ շարականը.**

«Սուրբ Աստված, անսկիզբ Հայր, Դու որ փառավորված ես սրբերիդ մեջ, երկնքի հրեշտակների հետ օրհնում ենք Քեզ:
Սուրբ Աստված, Միածին Որդի, Դու որ հաղթող պահեցիր սրբերիդ ճգնությունը, երկնքի հրեշտակների հետ գովաբանում ենք Քեզ:
Սուրբ Աստված, ճշմարիտ Հոգի, Դու որ տիեզերքը նորոգեցիր Սուրբ Երրորդությանդ ճշմարիտ երկրպագությամբ, անլռելի ձայնով բարեբանում ենք Քեզ»:

1) Հովհաննես Ա. Մանդակունի
2) Մեսրոպ Մաշտոց
3) Սահակ Ա. Պարթև
4) Պետրոս Ա. Գետադարձ

25 **Հայոց եկեղեցու տոնը համապատասխանեցնել տոնակատարության ժամանակին.**

1) Ծաղկազարդ
2) Խաչվերաց կամ Ս. Խաչի տոն
3) Վարագա Սուրբ Խաչի տոն
4) Գյուտ Խաչի տոն
5) Ս. Համբարձման տոն
6) Ս. Սարգսի տոն
7) Կաթուղիկե Ս. Էջմիածնի տոն
8) Քրիստոսի Պայծառակերպության տոն

ա) Հոկտեմբերի 23-29 ընկած կիրակի օրը
բ) Սեպտեմբերի 14-ի մերձակա կիրակի օրը
գ) Հունվարի վերջին կամ փետրվարի սկիզբն ընկած ժամանակահատվածում
դ) Ս. Հարության տոնին հաջորդող 65-րդ օրը
ե) Ս. Հարության տոնին հաջորդող 40-րդ օրը
զ) Հունիսի 28-ից օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում
է) Սեպտեմբերի 28-ի մերձակա կիրակի օրը
ը) Ս. Հարության տոնին նախորդող կիրակի օրը
թ) Օգոստոսի 15-ի մոտակա կիրակի օրը

1) 1-ը, 2-բ, 3-է, 4-ա, 5-ե, 6-գ, 7-դ, 8-զ
2) 1-ը, 2-դ, 3-է, 4-բ, 5-ե, 6-զ, 7-գ, 8-ա
3) 1-բ, 2-ը, 3-ա, 4-է, 5-դ, 6-զ, 7-ե, 8-թ
4) 1-գ, 2-բ, 3-է, 4-թ, 5-ե, 6-դ, 7-զ, 8-ը

26 **Կաթողիկոսի պատվանունը համպատասխանեցնել անվանը.**

1) Ներսես Ե. Աշտարակեցի	ա. Պաշտպան հայրենյաց
2) Վազգեն Ա. Պալճյան	բ. Հոգևոր Սուր
3) Մկրտիչ Ա. Խրիմյան	գ. Մեծ
4) Ներսես Ա. Պարթև	դ. Շնորհալի
5) Ներսես Դ. Կլայեցի	ե. Հայրենասեր
6) Արիստակես Ա. Պարթև	զ. Շինարար
7) Գևորգ Զ. Չորեքչյան	է. Բարեպաշտ
	ը. Հայրիկ

1) 1-ա, 2-զ, 3-ը, 4-գ, 5-դ, 6-բ, 7-ե
2) 1-ե, 2-է, 3-ա, 4-ը, 5-գ, 6-բ, 7-զ
3) 1-ա, 2-բ, 3-ը, 4-գ, 5-է, 6-զ, 7-ե
4) 1-ե, 2-ը, 3-ա, 4-բ, 5-դ, 6-գ, 7-է

27 **Թվարկվածներից որո՞նք Արևելյան Ուղղափառ եկեղեցիներից չեն.**

ա) Ղպտի Ուղղափառ եկեղեցի
բ) Հույն Ուղղափառ եկեղեցի
գ) Ասորի Ուղղափառ եկեղեցի
դ) Եթովպական Ուղղափառ եկեղեցի
ե) Մակեդոնական Ուղղափառ եկեղեցի
զ) Հնդկաստանի Ս. Թովմայի Մալանկարա Ուղղափառ եկեղեցի
է) Բուլղարական Ուղղափառ եկեղեցի
ը) Ռուս Ուղղափառ եկեղեցի

1) ա, դ, ե, է
2) բ, ե, է, ը
3) ա, բ, դ, ը
4) գ, ե, զ, է

28 **Թվարկվածներից որո՞նք ընդգրկված չեն Տաս պատվիրանների մեջ.**

ա) «Ես եմ քո Տեր Աստվածը … Ինձանից բացի այլ աստվածներ չպիտի լինեն քեզ համար»
բ) «Հավատքի մեջ երբեք չթուլանա՛ս»
գ) «Կուռքեր չունենա՛ս»
դ) «Քո Տեր Աստծո անունը զուր տեղը չպիտի արտասանես»
ե) «Քո մերձավորի ունեցածի վրա աչք մի՛ ունեցիր»
զ) «Մի՛ ստիր»
է) «Սիրեցե՛ք միմյանց»
ը) «Մի՛ ծուլացիր»

1) գ, զ, է
2) բ, է, ը
3) բ, դ, ե
4) ա, է, ը

29 **Հայոց կաթողիկոսների վերաբերյալ ստորև բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

ա) Աբրահամ Գ Կրետացի կաթողիկոսը Նադիր շահի թագադրության արարողության ժամանակ նրա մեջքին է կապել շահական իշխանության խորհրդանիշ սուրը:

բ) Ներսես Ե. Աշտարակեցի կաթողիկոսը ռուսական Սինոդին գրավոր ներկայացրել է Հայոց եկեղեցու դավանանքը՝ չմերժելով քննարկել հայ-ռուսական եկեղեցիների հնարավոր միության հարցը:

գ) Սիմեոն Ա. Երևանցի կաթողիկոսը 1780 թ. Մայր Աթոռում հրավիրել է գաղտնի խորհրդաժողով, որը դիմել է Եկատերինա II կայսրուհուն՝ խնդրելով նրա հովանավորությունը:

դ) Անանիա Ա. Մոկացի կաթողիկոսը Սյունյաց իշխանների և հոգևորականության խնդրանքով վերականգնել է Սյունիքի մետրոպոլիտությունը և Զևանշիր իշխանի որդուն ձեռնադրել Սյունյաց եպիսկոպոս:

ե) Ղուկաս Ա. Կարնեցի կաթողիկոսի մահից հետո կաթողիկոս է ընտրվել Սիմեոն Ա. Երևանցին:

զ) Եփրեմ Ա. Զորագեղցի կաթողիկոսը դիմել է ռուսական կառավարությանը՝ Գանձասարի կաթողիկոսական աթոռը լուծարելու խնդրանքով:

է) Մատթեոս Ա.Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսի ջանքերով վերականգնվել են կանոնավոր հարաբերությունները Մայր Աթոռի և Կ.Պոլսի Հայոց պատրիարքության հետ, որի արդյունքում Կ.Պոլսի նորընտիր պատրիարք Չուխաճյանի հրահանգով արևմտահայ բոլոր եկեղեցիներում սկսել են հիշատակել Ամենայն հայոց հայրապետի անունը:

ը) Նահապետ Ա. Եդեսացի կաթողիկոսի օրոք կառուցվել են Վաղարշապատի Ս. Շողակաթ, Երևանի Կոնդի և Քանաքեռի եկեղեցիները:

1) ա, դ, զ, ը
2) ա, բ, գ, դ
3) գ, դ, ե, է
4) բ, ե, զ, է

30 **Ստորև տրված պնդումներից որո՞նք են սխալ.**

ա) Դելփյան տաճարի առաստաղին գրված է. «Ճանաչիր ինքդ քեզ և կճանաչես քո նկարագիրն ու կհասկանաս քո էությունը»:

բ) Հայոց հեթանոսական դիցարանի գերագույն աստծո՝ Արամազդի տաճարը գտնվում էր Եկեղյաց գավառի Երիզա ավանում:

գ) Ըստ սրբոց Ոսկյանք վկաների ավանդության Հռոմի կասեր կողմից որպես պատգամավորներ Հայաստան ուղարկված 5 արքայազուն իշխանները ճանապարհին հանդիպել են Թադեոս առաքյալին և քրիստոնեություն ընդունել:

դ) Մուհամմադի մահվանից հետո նրա հետևորդները նրա քարոզները հավաքեցին մի ժողովածուի մեջ, որը հետագայում կոչվեց «Թալմուդ»:

ե) Երեմիա մարգարեն հրեաներին խորհուրդ է տալիս Բաբելոնի դեմ մղվող պայքարում դաշնակցել հայերի հետ:

զ) Աբգար դպիր Թոխատեցին Հայոց կաթողիկոսի հանձնարարությամբ բանակցություններ է վարել Վենետիկի Հանրապետության ղեկավարության և Հռոմի պապի հետ:

է) Շիաների դավանանքը ձևավորվել է XII-XIII դարերում, այդ ուղությունը Իրանի Իսլամական Հանրապետության պետական կրոնն է:

1) դ, զ, է
2) գ, ե, է
3) ա, բ, դ
4) բ, գ, զ

31 **1114 թ. հաստատված Հայոց կաթողիկոսի ընտրության նոր կարգի համաձայն ո՞ր եկեղեցական աթոռների համաձայնությամբ պետք է կատարվեր կաթողիկոսի ընտրությունը.**

ա) Հաղպատ
բ) Տաթև
գ) Սանահին
դ) Արտազ
ե) Աղթամար
զ) Գանձասար
է) Բջնի

1) գ, դ, ե, է
2) դ, ե, զ, է
3) ա, բ, դ, է
4) բ, գ, ե, զ

32 **Հայոց եկեղեցու խորհուրդների վերաբերյալ բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

ա) Մկրտվող անձը պետք է ունենա կնքահայր, ում մկրտված լինելը պարտադիր է:
բ) Կարգ հիվանդացը այն խորհուրդն է, որով հոգևորականը հատուկ աղոթք է կարդում հիվանդի համար:
գ) Ձեռնադրության խորհուրդը միշտ կատարվում է պատարագի ընթացքում:
դ) Դրոշմի խորհուրդը կատարվում է օրհնված ջրով:
ե) Մկրտության խորհուրդը միայն մեկ անգամ է կատարվում, իսկ Դրոշմի խորհուրդը կարող է կրկնվել:
զ) Ապաշխարության խորհուրդը պատարագի արարողության առանցքն է:
է) Նորապսակների միևնույն բաժակից գինի խմելը նշանակում է, որ նրանք բոլոր իրավիճաներում պիտի անբաժան լինեն:
ը) Ապաշխարության խորհրդով թողություն է տրվում այն մեղքերին, որոնք մարդը գործել է ծննդյան օրվանից ի վեր:

1) գ, դ, ե, է
2) բ, զ, է, ը
3) ա, ե, զ, ը
4) ա, բ, գ, է

33 **Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից կամ հետևանքներից որո՞նք են ճիշտ.**

ա) Ռուս - պարսկական պատերազմից հետո գեներալ Ի. Պասկևիչը հալածանքներ սկսեց Ներսես Ե. Աշտարակեցի կաթողիկոսի դեմ և ամեն ինչ արեց նրան ասպարեզից հեռացնելու համար, դրա պատճառով Հովհաննես Ը.Կարբեցի կաթողիկոսը նրան աքսորեց Պետերբուրգ:

բ) 1801 թ. Թիֆլիսում նորընտիր կաթողիկոսի հանկարծամահ լինելու հետևանքով, կաթողիկոսական աթոռը դարձավ պայքարի առարկա:

գ) Բոլոր բնագավառներում տիրապետող անորոշության հետևանքով Ք.ծ.ա VI-V դարերում ծնունդ առավ մի նոր աստծու գաղափար, որին անվանեցին Անծանոթ Աստված:

դ) 226 թ. Պարսկաստանում տեղի ունեցած Սասանյան հեղաշրջման հետևանքով Պարսկաստանի նախկին դաշնակից Հայաստանը դարձավ նրա գլխավոր հակառակորդներից մեկը:

ե) 1906 թ. ազգային-եկեղեցական ժողովում հնչած հակացարական ելույթների պատճառով ոստիկանությունը ցրեց այն:

զ) Եվրոպական պետությունների նենգ ու խարդախ քաղաքականության հետևանքով 1820-1830-ական թթ. հայ հոգևոր եկեղեցական կյանքում տեղի ունեցան իրադարձություններ, որոնք թուլացրեցին Հայոց եկեղեցին և հարված հասցրեցին նրա հեղինակությանն ու ազդեցությանը:

է) Կրոնական-քաղաքական բաժանումների և անհամաձայնությունների հետևանքով Հռոմկլեայի Հայոց կաթողիկոսությանը չհաջողվեց վերականգնել իր իրավունքները և 1254 թ. տեղափոխվեց Ծովք:

ը) XX դարի 80-ական թթ. վերջին և 90-ական թվականներին Հայաստանի Հանրապետություն մուտք գործած տարաբնույթ կրոնական հոսանքներից մի քանիսին, Հայաստանի սոցիալ տնտեսական և բարոյահոգեբանական ծանր վիճակով պայմանավորված, հաջողվեց հայ հասարակության մեջ ձեռքբերել հետևորդներ և ձևավորել համայնքներ:

1) ա, գ, զ, է
2) բ, դ, զ, ը
3) ա, բ, դ, ե
4) դ, ե, է, ը

34 **Թվարկվածներից որո՞նք պատմական իրադարձությունների իրական պատճառ կամ հետևանք չեն.**

ա) Կրթական գործին զգալի հարված հասցրեց Ալեքսանդր III-ի հրամանը, որով ծխական դպրոցները պետք է ենթարկվեին ուսումնական վարչությանը։

բ) Կաթոլիկ եկեղեցու առաջնորդ Անտոն Հասունյանը աթոռը տեղափոխեց Լիբանան, որն առաջացրեց թուրքական կառավարության դժգոհությունը։

գ) Նկատի ունենալով Իկոնիայի սուլթանությունից, եգիպտական մամլուքներից և խաչակիրներից եկող վտանգները՝ Հեթում 1-ինը կաթողիկոսական աթոռը տեղափոխեց Սիս։

դ) Սփյուռքահայերի խնդրանքը հաշվի առնելով 1938 թ. ՀԿ(բ)Կ կենտկոմը հրաժարվեց Ս. Էջմիածինը փակելու մտադրությունից։

ե) Դառնալով կաթողիկոս Մկրտիչ Ա. Խրիմյանը վճռական քայլեր ձեռնարկեց արևմտահայության ծանր վիճակը մեղմելու ուղղությամբ։

զ) XIV-XV դդ. ռազմաքաղաքական ծանր վիճակի պատճառով խաչքարային արվեստն անկում ապրեց։

է) Արիոս երեցի սխալ քարոզների պատճառով IV դարում խախտվեց եկեղեցու խաղաղությունը։

1) ա, զ, է
2) ա, գ, է
3) բ, գ, դ
4) բ, դ, ե

35 **Թվարկվածներից որո՞նք են պատմական իրադարձությունների իրական պատճառ կամ հետևանք.**

ա) 1071 թ. Մանազկերտի ճակատամարտից հետո, ազատվելով բյուզանդական գերիշխանությունից, մի քանի հայ իշխանական տներ փորձեցին ստեղծել քաղաքական նոր կենտրոններ։

բ) Կաթոլիկ եկեղեցու կողմից XVI դարում ինը աստիճանների հարցի բարձրացումը պատրվակ հանդիսացավ Հայոց եկեղեցու անկախության նկատմամբ ոտնձգություններ կատարելու համար։

գ) 1090 թ. Բարսեղ Ա. կաթողիկոսի և Մելիք Ա. Շահի հանդիպման արդյունքում որոշվեց, որ Հոնիի կաթողիկոսությունը պետք է դադարեցնի իր գործունեությունը։

դ) 608 թ. անջատման հետևանքով վրաց եկեղեցին բաժանվեց Արևելյան եկեղեցական ընտանիքից և ընդունեց Կ. Պոլսի տիեզերական պատրիարքի առաջնայնությունը, հունական եկեղեցու ծեսերն ու արարողությունները։

ե) Աղվանից Աբաս կաթողիկոսը սահմանեց կարգ, որով իր հաջորդները պետք է ձեռնադրվեին Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից։

զ) Ս. Էջմիածնում Հակոբ Դ. Ջուղայեցի կաթողիկոսի գլխավորությամբ հրավիրված ժողովը, Հայաստանն ազատագրելու նպատակով, որոշում ընդունեց օգնության խնդրանքով դիմել Եկատիրինա I կայսրուհուն։

է) Հռոմի պապի, Վենետիկի հանրապետության և գերմանական կայսեր հետ Ստեփանոս Ե. Սալմաստեցի կաթողիկոսի բանակցությունները ոչ մի էական արդյունք չտվեցին, քանի որ Եվրոպական տիրակալները հայերի հետ բանակցությունների հիմքում դնում էին կաթոլիկ եկեղեցուն հնազանդվելու անհրաժեշտությունը։

1) բ, դ, զ, է
2) ա, գ, դ, զ
3) ա, դ, ե, է
4) բ, գ, ե, զ

36 **Թվարկվածներից որո՞նք են պատմական իրադարձությունների իրական պատճառ կամ հետևանք.**

ա) Անսալով Մակար Ա. Թեղուտեցի կաթողիկոսի դիմում-բողոքներին ցարական կառավարությունը 1897 թ. հրաժարվեց հայկական ծխական դպրոցները լուսավորության նախարարության տնօրինության ներքո դնելու որոշումից:

բ) Հայերի բարոյական կորովը բարձրացնելու նպատակով 1897 թ. 300 հայ վրիժառուներ կազմակերպեցին պատժիչ գործողություն, որը հայտնի է Խանասորի արշավանք անունով:

գ) Հույների ոտնձգությունների պատճառով Երուսաղեմի հայոց պատրիարքությունը XIX դարի 30-ական թթ. դիմեց Հռոմի պապի օգնությանը:

դ) 1922 թ. կազմված ժամանակավոր «դաշնագրի» արդյունքում կարգավորվեցին Մայր Աթոռի և խորհրային իշխանությունների հարաբերությունները:

ե) Մուհամմադի հեղինակության բարձրացման պատճառով Յասրիբը վերանվանեցին «Մարգարեի քաղաք»:

զ) Մայր Աթոռի բողոքների հիման վրա 1905 թ. ցարական կառավարությունը հրապարակեց հատուկ շրջաբերական, որով կաթոլիկ միսիոներները քարոզելու իրավունք էին ստանում Ալեքսանդրապոլում և հարակից գյուղերում:

է) Համաձայնություն ձեռք բերելով Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ Մացակ Պապյանի հետ, Գևորգ արքեպիսկոպը 1941 թ. հրավիրեց Ազգային-եկեղեցական ժողով:

1) գ, դ, ե
2) ա, բ, զ
3) դ, զ, է
4) բ, ե, է

37 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) Հավատացյալների կրոնական կյանքի ճիշտ կազմակերպման և կրոնական կենցաղին վերաբերող 24 կանոնների ընդունումը Սսի ժողովում
բ) Աղթամարի հակաթոռ կաթողիկոսության ստեղծումը
գ) Պավլիկյանների դեմ հատուկ կանոնի ընդունումը Դվինի եկեղեցական ժողովում
դ) Կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Աղթամար
ե) «Կառավարիչ Ս. ժողովի» կամ Սինոդի հրավիրումը
զ) Ս. Հռիփսիմյանց կույսերին նվիրված եկեղեցու կառուցումը Անիում
է) Հայկական թեմերի հիմնումն Անտիոքում և Կիլիկիայում
ը) Պահլավունիների տոհմի կաթողիկոսական իշխանության ավարտը
թ) Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտոնական պարբերական «Արարատ» հանդեսի հիմնադրումը

1) գ, դ, է, զ, բ, ը, ա, ե, թ
2) գ, բ, դ, զ, է, թ, ա, ե, ը
3) դ, գ, զ, բ, թ, է, ա, ը, ե
4) բ, գ, զ, դ, է, թ, ե, ը, ա

38 **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել յոթերորդը.**

ա) Հակոբ Դ. Ջուղայեցու գլխավորությամբ հայկական պատվիրակության ժամանումը Կ. Պոլիս
բ) Զաքարիա Գ. կաթողիկոսի բանակցությունները թուրքմեն Ջահան շահի հետ
գ) «Տերանց Հայոց» գաղտնի խորհրդաժողովի հրավիրումը Ս. Էջմիածնում
դ) Միքայել Սեբաստացու գլխավորությամբ գաղտնի խորհրդաժողովի հրավիրումը Սեբաստիայի Մայր եկեղեցում
ե) Ստեփանոս Դ. Տղա կաթողիկոսի ձեռամբ Սմբատ Արծրունու օծումը Հայոց թագավոր
զ) Հակոբ Մեղապարտի կողմից «Ուրբաթագիրքի» հրատարակումը Վենետիկում
է) «Օրացույց» և «Սաղմոսարան» գրքերի հրատարակումը Վենետիկում
ը) Մովսես Գ. Տաթևացու ընտրվելը Ամենայն Հայոց կաթողիկոս
թ) Պարսից շահ Աբաս 1-ի կողմից շուրջ 400 հազար արևելահայերի բռնագաղթը Պարսկաստան

1) թ
2) ը
3) է
4) դ

39 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա) Հալեպում հայ կաթողիկե եկեղեցու պաշտոնապես հռչակումը որպես կառույց և եկեղեցական առանձին նվիրապետություն
բ) Տպարանի և թղթի գործարանի հիմնադրումը Էջմիածնում
գ) Հայկական եկեղեցական հողերի և գույքի բռնագրավման օրենքի հաստատումը Նիկոլայ II ցարի կողմից
դ) Ղարաբաղի մետրոպոլիտության ստեղծումը
ե) Կ.Պոլսում, կաթոլիկ հայերի կողմից, հայոց պատրիարքարանից անջատ ինքնուրույն վարչության ստեղծումը
զ) Գևորգյան ճեմարանի հիմնումը
է) Սյունյաց մետրոպոլիտության լուծարումը
ը) Ֆոնուզի Ս.Կարապետ վանքի փոխվանահայր Բարդուղիմեոս վարդապետի սրի տակով թուրքական կայազորի գերի ընկած շուրջ 700 զինվորների խոնարհված անցնելը
թ) Բռնություններին վերջ տալու նպատակով Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի կողմից բողոքագրի ներկայացումը Թուրքիայի արդարադատության նախարարությանը

1) գ, ա, է, զ, բ, դ, ը, ե, թ
2) բ, ա, գ, դ, զ, ե, ը, թ, է
3) ա, բ, դ, ե, է, զ, ը, գ, թ
4) բ, դ, ա, զ, ը, է, թ, ե, գ

40 **Հայոց կաթողիկոսների անունները դասավորել ըստ նրանց գահակալության ժամանակագրական հաջորդականության.**

ա) Բարսեղ Ա. Անեցի
բ) Կոմիտաս Ա. Աղցեցի
գ) Մաշտոց Ա. Եղիվարդեցի
դ) Գևորգ Բ. Գառնեցի
ե) Զաքարիա Ա. Ձագեցի
զ) Ներսես Բ. Բագրևանդցի
է) Սարգիս Ա. Սևանցի
ը) Ներսես Գ. Տայեցի
թ) Հովհաննես Ե. Դրասխանակերտցի

1) գ, զ, ը, դ, բ, ե, է, ա, թ
2) գ, բ, զ, ա, թ, ը, է, դ, ե
3) զ, բ, ը, ե, դ, գ, թ, է, ա
4) բ, ը, թ, է, գ, զ, ա, ե, դ

41 **Ընտրել տերմինների և հասկացությունների ճիշտ բացատրությունը.**

1) Հայոց եկեղեցում կուսակրոնություն ընդունած արքեպիսկոպոսին անվանում են աբեղա:
2) Քրիստոնեական եկեղեցու երկրորդ մեծ բաժանումից հետո Բյուզանդական եկեղեցին և նրա կողմնակիցներն իրենց անվանեցին Օրթոդոքս:
3) Օրթոդոքս եկեղեցիներից յուրաքանչյուրն ունի իր հոգևոր առաջնորդը, ով կրում է պատրիարք, արքեպիսկոպոս կամ մետրոպոլիտ տիտղոսը:
4) Կաթոլիկ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականները կոչվում են կարդինալներ:
5) 1054 թ. բաժանումից հետո Հռոմեական լատին եկեղեցին կոչվեց Բողոքական եկեղեցի:
6) Եպիսկոպոս բառացի նշանակում է վերատեսուչ, նա իրավունք ունի ձեռնադրել քահանաներ, դպիրներ, կատարել բոլոր խորհուրդները:
7) Օրթոդոքս եկեղեցու հայտնի ուղղություններից են լյութերական, կալվինական, ավետարանական, մկրտչական եկեղեցիները:

42 **Ընտրել տերմինների և հասկացությունների ճիշտ բացատրությունը.**

1) Հայոց եկեղեցում քահանայությունից ցածր կան վեց աստիճաններ՝ սարկավագ, դպիր և այլն:
2) Նորակառույց կամ վերանորոգված եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունը կոչվում է հիմնօրհնեք:
3) Այն սրբախոսությունը, որի մեջ քրիստոնյան, խոստովանելով ու վկայելով իր հավատը, նահատակվում է հակառակորդների կամ թշնամիների կողմից, կոչվում է վարք:
4) Սոփեստները շրջիկ փիլիսոփաներ էին, ովքեր գտնում էին, որ արդարությունը և բարոյական բոլոր հասկացությունները անհատական և հարաբերական են:
5) Մկրտության խորհրդի ժամանակ օգտագործվող կարմիր և սպիտակ թելերի հյուսվածքը կոչվում է նարոտ:
6) Նիհիլիզմի ուսմունքի համաձայն այն, ինչն օգտակար է մարդուն անձնապես բարի և արդար է, իսկ ինչը վնասակար է՝ չար է և անարդար:
7) Եկեղեցում, Խորանի աջ կողմում գտնվում է Պատարագի Սուրբ սեղանը:

43 **Թվարկվածներից որո՞նք Հայոց եկեղեցու յոթ առաքինություններից չեն.**

1) հեզություն
2) աշխատասիրություն
3) հավատարմություն
4) ժուժկալություն
5) ապաշխարություն
6) բղջախոհություն
7) ողորմածություն

44 **Ընտրել տերմինների և հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

1) Հին հռոմեացիների կարծիքով յուրաքանչյուր հռոմեացի ուներ իր անձնական հովանավոր ոգին, որը կոչվում էր գենիուս։
2) Հեթանոս հայերի կարծիքով աշխարհը բաղկացած էր երկու մասից՝ Երկիր և Երկինք։
3) Վան քաղաքի միջնաբերդում գտնվող «Միհրի դուռ» կոչվող ժայռի վրա Իշպուինի արքան փորագրել տվեց իր տերության բոլոր աստվածների անունները։
4) Պարսիկների՝ աշխարհի ստեղծման մասին տեղեկությունները պահպանվել են պարսկական գրական վաղ ստեղծագործություններում՝ «Վեդաներում»։
5) Բրահմա անունը նշանակում է «պայծառատես, ճշմարտությունը գտած»։
6) Ըստ պարսիկների՝ Ահրումազդան պատկերացվել է կայծակի տեսքով, որը «ուժեղ և սաստիկ ոգու» հայրն էր։
7) «Քրիստոսի անձեռակերտ դիմանկարը» հայտնի է «Տիրոջ դաստառակ», «Փրկչի կենդանագիր պատկեր» և այլ անուններով։

45 **Թվարկվածներից որո՞նք հայ զինվորականության պատվո վարքականոնի գլխավոր 8 դրույթ-պահանջներից չեն.**

1) Հավատարմություն և անձնուրաց ծառայություն Հայաստանի բոլոր բնակիչներին՝ անկախ նրանց սոցիալական ծագումից և դիրքից:
2) Նվիրվածություն և հավատարմություն իրենց բնակավայրի քահանաներին և եկեղեցու սպասավորներին:
3) Նվիրվածություն ընտանիքին
4) Ներողամտություն հակառակորդի նկատմամբ
5) Հավատարմություն և անձնուրաց ծառայություն քրիստոնեական բոլոր եկեղեցիներին
6) Քրիստոնեական հավատի և ազգային եկեղեցու նկատմամբ բարեպաշտ վերաբերմունք և դրանց անձնուրաց պաշտպանություն
7) Հավատարմություն զինակիցներին

46 **Ստորև բերված պնդումներից որո՞նք են սխալ.**

1) 1918 թ. Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանի ներկայացմամբ Հայոց կաթողիկոսը հաստատեց հրահանգ, որով Հայաստանի առաջին Հանրապետության բանակում պետք է առաջնորդվեին զինվորական քահանաները:
2) 1441 թ. Աղթամարում գահակալող Զաքարիա Գ. կաթողիկոսը մեծ աջակցություն ցուցաբերեց կաթողիկոսական աթոռը Սսից Էջմիածին տեղափոխելու գործին:
3) Լազարյան ճեմարանի շրջանավարտների ջանքերով, Հայոց եկեղեցու հետևորդներին և կաթոլիկ հայերին միավորելու նպատակով, Կ.Պոլսում ստեղծվեց «Համազգյաց» ընկերությունը:
4) Մաշտոց Ա. Եղիվարդեցու կողմից Սմբատ Ի-ի թագադրությունից հետո Աբաս սպարապետը, հասկանալով իր քայլի կորստաբեր լինելը, գնաց կաթողիկոսի մոտ, զղջաց և մեղքերի թողություն խնդրեց:
5) Ս. Վարդան Մամիկոնյանը Ս. Սահակ Պարթև կաթողիկոսի թոռն էր:
6) Գևորգ Ե. կաթողիկոսը հայկական բարենորոգումների հարցը մեծ տերություններին ներկայացնելը հատուկ կոնդակով լիազորեց Լևոն Շանթին:
7) 1850 թ. թուրքական կառավարությունը հատուկ հրամանագրով ճանաչեց բողոքական եկեղեցին՝ որպես հայոց եկեղեցուց անջատ կրոնական համայնք:

47 **Հայոց կաթողիկոսների վերաբերյալ ստորև բերված պնդումներից որո՞նք են սխալ.**

1) Գանձասարի վանքի մասին առաջին տեղեկությունը հայտնել է Անանիա Ա. Մոկացի կաթողիկոսը:
2) Սարգիս Ա. Սևանցի կաթողիկոսը հիմնել է Բջնիի և Ամբերդի եպիսկոպոսությունները:
3) Գրիգոր Գ. Պահլավունի կաթողիկոսը խաչակիրներից գնել է Եփրատի ափին գտնվող Հռոմկլեա ամրոցը և կաթողիկոսական աթոռը տեղափոխել այնտեղ:
4) Հակոբ Բ. Անավարզեցի կաթողիկոսը միաբարներին արգելել է լատինական ծեսով պատարագ, մկրտություն կատարել և հայերին հռոմեադավան դարձնել:
5) Նիկոլայ I ցարի հրավերով Ներսես Ե. Աշտարակեցի կաթողիկոսը մեկնել է Սանկտ Պետերբուրգ, որտեղ ցարի կողմից արժանացել է շքեղ ընդունելության և պարգևատրվել ռուսական բարձրագույն շքանշանով:
6) Զիրավի ճակատամարտի ողջ ընթացքում, Նպատ լեռան գագաթին, Հայոց կաթողիկոս Հովհաննես Ա. Մանդակունին ձեռքերը վեր բարձրացրած, անդադար աղոթում էր՝ խնդրելով Աստծո աջակցությունը:
7) Քրիստոնեական եկեղեցու սրբերի և նահատակների կյանքն ու գործը ներկայացնող ժողովածուներ և գրքեր թարգմանելու համար Գրիգոր Բ. կաթողիկոսն արժանացել է Վկայասեր անվանը:

48 **Ստորև բերված պնդումներից որո՞նք տեղ չեն գտել Գևորգ Ե. Սուրենյանց կաթողիկոսի՝ Ի. Վորոնցով-Դաշկովին գրած նամակում.**

1) Ամենայն Հայոց կաթողիկոսը մարզի կառավարչի հետ համատեղ պետք է մասնակցեր մարզի կառավարման գործերին:
2) Անատոլիայի հայկական գավառներից պետք է կազմվեր մեկ անբաժանելի մարզ:
3) Մարզի կառավարիչը պետք է ընտրվեր Թուրքիայի և Ռուսաստանի կողմից:
4) Բարենորոգման ամբողջ վերահսկողությունը պետք է վերապահվեր բացառապես Ռուսաստանին:
5) Մարզում հոգևոր բոլոր արարողությունների ժամանակ պետք է հիշատակվեր ցարի անունը:
6) Մարզը ներքին և արտաքին վտանգներին դիմակայելու համար պետք է ունենար առավելագույնը 10.000 հոգանոց բանակ:
7) Մարզում պետք է մտցվեր լայն ինքնակառավարում, ընտրական սկզբունքների հիման վրա քրիստոնյաներից և մուսուլմաններից հավասար թվով ներկայացուցիչներով:

49 **Ստորև բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

1) Հին Կտակարանը բաղկացած է 48 գրքերից, որոնցից առաջին չորս գրքերը կոչվում են Ավետարաններ:
2) Անբարոյական կնոջը քարկոծել ցանկացող մարդկանց Հիսուս Քրիստոսն ասաց. «Ձեր միջից խոնարհը նախ թող առաջինը քար գցի նրա վրա»:
3) Նոր Կտակարանում գրված է, որ Հիսուս Քրիստոսը Հովհաննես, Հակոբոս և Պետրոս առաքյալների հետ բարձրացավ Ձիթենյաց լեռը, որտեղ աղոթքի ժամանակ Նրա դեմքը սկսեց փայլել արեգակի նման, իսկ զգեստները սպիտակեցին լույսի պես:
4) Գաբրիել հրեշտակը Զաքարիային պատվիրեց մանկանն անվանել Հովհաննես, որ նշանակում է «Աստծո շնորհ»:
5) Թադեոս առաքյալն Ավետարանում հիշատակվում է նաև Ղեբեոս անունով:
6) Զինվորները ստիպեցին Սիմեոն Կյուրենացուն, որ Հիսուսին օգնելու համար բարձրացնի նրա խաչափայտը:
7) Երբ լրացավ Հիսուսի 33 տարին, նա գնաց Հովհաննեսի մոտ և խնդրեց իրեն ևս մկրտել:

50 **Թվարկվածներից որո՞նք Ք. ա. I դարում Հռոմեական կայսրությունում քրիստոնեության տարածման իրական պատճառ կամ հետևանք չեն.**

1) Քրիստոնեությունը ոչ միայն հավատ էր նվիրում, այլ նաև՝ ապրելաձև և հասարակության մեջ ամրապնդում էր բարոյական կյանքի հանդեպ զգացումը:
2) Մարդկանց գիտակցության մեջ հեթանոսական աստվածների և կուռքերի նկատմամբ հավատի աստիճանաբար թուլացումը:
3) Հիսուս Քրիստոսի կատարած հրաշքների պատճառով իշխող վերնախավի մեծամասնության քրիստոնյա դառնալու հանգամանքը:
4) Նոր կրոնի՝ մարդկանց և ժողովուրդների հավասարություն, ներողամտություն, սեր և այլն քարոզելը:
5) Մարդկանց հուսահատությունը, պատիժներից խուսափելու պատճառով անապատներում և անմարդաբնակ վայրերում հոծ բազմություններով հաստատվելը:
6) Երկնքում բնակվող աստվածների և քրմերի միջև կապի խախտումը:
7) Անձնական հովանավոր ոգիների նկատմամբ հավատի թուլացումն ու բազմաթիվ դեպքերում դրա բացակայությունը:

51 **Թվարկված պատճառներից որո՞նք են ճիշտ:**
XIX դարի վերջին և XX դարի սկզբին թուրքական և ռուսական իշխանությունները Հայ Առաքելական Եկեղեցու դեմ հալածանքներ էին սկսել, որովհետև այն դիտարկում էին որպես.

1) Վրաց ուղղափառ երեղեցու հետ սերտորեն համագործակցող կառույց
2) հայեցի կրթության և դաստիարակության համազգային կառույց
3) զինված խմբավորումներ ստեղծող համազգային կառույց
4) հայ մշակույթի պահպանման համազգային կառույց
5) ազգային ավանդույթների, կենցաղի և բարքերի պահպանման համազգային կառույց
6) Կաթոլիկ եկեղեցու դեմ բողոքական տարբեր շարժումներ հովանավորող կառույց
7) թուրքական և ռուսական իշխանությունների միջև հակասություններ սրող կառույց

52 **Թվարկվածներից որո՞նք են պատմական իրադարձությունների իրական պատճառ կամ հետևանք.**

1) Հայոց հոգևոր վերազարթոնքի նպատակով Գարեգին Բ. կաթողիկոսը հռչակեց օրհնության օրեր՝ Տյառընդառաջը որպես նորապսակների օրհնության օր, Սուրբ Սարգիս զորավարի տոնը՝ երիտասարդների օրհնության օր, Ծաղկազարդը՝ մանուկների օրհնության օր և այլն:
2) «Գավառահայ հարստահարությունների բողոքագրքի» Ալեքսանդր I ցարին ներկայացնելու հիմնական պատճառը արևմտահայության և արևելահայության ծանր վիճակի մասին ցարին տեղեկացնելն էր:
3) Խաչակիրների կողմից Շուղրիի Կարմիր Վանքի գրավման պատճառով Հայրապետական աթոռը տեղախոխվեց Հռոմկլեա:
4) «Հայոց եկեղեցու կանոնադրության» Թիֆլիսյան տարբերակը 1830 թ. Պետերբուրգ ուղարկվելուց հետո չհաստատվեց, քանի որ չէր համապատասխանում ո՛չ ցարական բարձրագույն իշխանության ցանկությանը, ո՛չ էլ Հայոց եկեղեցու հնավանդ ծեսերին և կանոններին:
5) Կիլիկիայում հայոց թագավորության անկումից հետո կաթոլիկ եկեղեցին էլ ավելի սաստկացրեց հայերի դավանափոխ լինելու և Հռոմի պապի գերագահությունը ընդունելու պարտադրանքները:
6) Մկրտիչ Ա. Խրիմյան կաթողիկոսի և Նիկոլայ II կայսեր հանդիպման արդյունքում կաթողիկոսին թույլատրվեց Ռուսաստանի հայաբնակ վայրերում արևմտահայությանն օգնելու նպատակով հանգանակություն կազմակերպել:
7) Հայոց եկեղեցին թուլացնելու նպատակով խորհրդային իշխանությունը 1930 թ. օգոստոսի 4-ին ՀԿ(բ)Կ կենտկոմի որոշմամբ փակվեցին Հայոց եկեղեցու բոլոր թեմերը, պետականացրեցին Ս. Էջմիածնի վանքի արժեքները և հանձնեցին ֆինանսների ժողկոմատին:

53 **Ստորև թվարկվածներից որո՞նք նշված վայրում եկեղեցական ժողով հրավիրելու իրական պատճառ չեն հանդիսացել.**

1) Հայ-բյուզանդական եկեղեցիների մերձեցման հետ կապված, բյուզանդական եկեղեցու պահանջներին պատասխան տալու համար 1178 թ. Հռոմկլեայում հրավիրվեց եկեղեցական ժողով:
2) Հռոմկլեայի և Ադանայի ժողովների որոշումները հաստատելու նպատակով 1243 թ. Սսում հրավիրվեց եկեղեցական ժողով:
3) Հայ-վրացական եկեղեցիների տարաձայնությունները կարգավորելու նպատակով նպատակով Կոստանդին Գ. կաթողիկոսի նախաձեռնությամբ 1317 թ Ադանա քաղաքում հրավիրվեց եկեղեցական ժողով:
4) Նախնիների հաստատած եկեղեցական կարգերը նորոգելու և որոշ բարեփոխումներ իրականացնելու նպատակով 354 թ. Աշտիշատում հրավիրվեց եկեղեցական ժողով:
5) Քաղկեդոնի ժողովի որոշումները մերժելու նպատակով Բաբկեն Ա. կաթողիկոսի նախաձեռնությամբ 719 թ. Դվինում հրավիրվեց եկեղեցական ժողով:
6) Հայոց Եկեղեցին ծանր վիճակից դուրս բերելու և եկեղեցական կյանքը կանոնավորելու նպատակով 1066 թ. Գագիկ Կարսեցու նախաձեռնությամբ Ծամնդավում հրավիրվեց ժողով:
7) Ներսես Ե. Աշտարակեցու մահից հետո Էջմիածնում հրավիրված ազգային եկեղեցական ժողովը Կ.Պոլսի պատրիարքության հետ հարաբերությունները ամրապնդելու նպատակով որոշեց կաթողիկոս ընտրել արևմտահայ եպիսկոպոսներից որևէ մեկին:

54 **Թվարկված իրադարձություններից ո՞ր երկուսն են խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Վերահաստատվեց Հայոց եկեղեցու Արցախի թեմը:
2) Հռոմի պապի որոշումով կազմավորվեց Հայաստանի, Վրաստանի և Արևելյան Եվրոպայի թեմը, որի առաջնորդարանը գտնվում է Գյումրիում:
3) Վազգեն կաթողիկոսն արժանացավ Հայաստանի ազգային հերոսի բարձրագույն կոչման ու «Հայրենիք» շքանշանին:
4) Մեծ Բրիտանիայում Հայոց եկեղեցուն դավանակից Արևելյան Ուղղափառ եկեղեցիները դիմեցին Ամենայն Հայոց կաթողիկոսին՝ էկումենիկ հարցերի հետ կապված հանդես գալ միասնական տեսակետով:
5) Ամենայն Հայոց կաթողիկոսի ձեռամբ օծվեց Մեծի Տանն Կիլիկիո նորընտիր կաթողիկոս Արամ Ա-ն:
6) «Այց առաջին քրիստոնյա երկիր» կարգախոսով Հայաստանում ուխտավորաբար հյուրընկալվեց Հռոմի պապը:
7) Մխիթարյան միաբանության Վենետիկի և Վիեննայի երկու հաստատությունները միավորվեցին և ստեղծեցին Մխիթարյան միացյալ միաբանություն:
8) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց Եկեղեցի-Պետություն հարաբերությունները կարգավորող օրենքը:

55 **Ստորև թվարկված տոներից ո՞ր երկուսն են խախտում տարվա ընթացքում նրանց տոնման ճիշտ հաջորդականությունը:**

1) Սուրբ Ծնունդ
2) Սուրբ Վարդանանց տոն
3) Սուրբ Ղևոնդյաց տոն
4) Բուն Բարեկենդան
5) Սուրբ Հարության տոն
6) Մարիամ Աստվածածնի Վերափոխման տոն
7) Քրիստոսի Պայծառակերպության տոն
8) Ս. Թարգմանչաց տոն

56 **Հայոց եկեղեցու ժամերգություններից ո՞ր երկուսն են խախտում օրացույցային օրվա սկզբից դրանց կատարման հերթականությունը.**

1) Գիշերային
2) Արևագալի
3) Առավոտյան
4) Ճաշու երրորդ ժամի
5) Ճաշու վեցերորդ ժամի
6) Ճաշու իններորդ ժամի
7) Խաղաղական
8) Երեկոյան
9) Հանգստյան

57 **Թվարկվածներից որո՞նք են վերաբերվում 1836 թ. հաստատված Հայոց եկեղեցու կանոնադրությանը՝ «Պոլոժենիե»-ին.**

1) «Պոլոժենիեն» կարգավորում էր ցարական կառավարության ու Հայոց եկեղեցու փոխհարաբերությունները և գոյություն ունեցավ մինչև 1922 թ.:
2) «Պոլոժենիեի» համաձայն Հայոց կաթողիկոսին ընտրում էր ազգային-եկեղեցական ժողովը:
3) Ազգային-եկեղեցական ժողովին մասնակցելու համար յուրաքանչյուր թեմ ընտրում էր երկու հոգևորական և չորս աշխարհական պատգամավոր:
4) «Պոլոժենիեն» բաղկացած էր 10 գլխից և 141 հոդվածից:
5) «Պոլոժենիեի» համաձայն Արևելյան Հայաստանը և Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող հայկական շրջանները բաժանվում էին 8 թեմի:
6) «Պոլոժենիեի» համաձայն զուտ դավանաբանական հարցերի հետ կապված որոշումները կայացնում էր Սինոդը:
7) «Պոլոժենիեի» համաձայն Հայոց եկեղեցու տնօրինությանն էին թողնվում դպրոցները, կրթամշակութային այլ հաստատություններ, ծննդյան, ամուսնության և թաղման գործերը:
8) «Պոլոժենիեի» համաձայն ազգային-եկեղեցական ժողովն առաջարկում էր երկու թեկնածու, որոնց անունները պաշտոնապես ներկայացվում էին ցարին, ով նրանցից մեկին հաստատում էր կաթողիկոս:

58 **Թվարկվածներից որո՞նք բնորոշ չեն հայկական խաչքարին.**

1) Խաչքարի միայն մեկ՝ արևելյան երեսն է մշակվում և զարդարվում, որովհետև եկեղեցաժիսական կանոնի համաձայն քրիստոնյան աղոթելիս դեմքը պետք է դեպի արևելք դարձնի, քանի որ Քրիստոսի երկրորդ գալուստը արևելքից է ակնկալվում։
2) Խաչքարի պատվանդանը լինում է աստիճանաձև, խարսխաձև և բրգաձև։
3) Խաչքարի քիվի վրա հաճախ պատկերված են 4 ավետարանիչների խորհրդանշանները։
4) Խաչքարի քիվի վրա պատկերված երեք խաչը ներկայացնում է Ս. Երրորդության խորհուրդը։
5) Խաչքարի բրգաձև պատվանդանը հիշեցնում է Բաբելոնի աշտարակը։
6) «Ամենափրկիչ» կոչվող խաչքարերի քանդակազարդ երեսին պատկերված են Քրիստոսի խաչելության տեսարաններ։
7) Խաչքարերը միակտոր քարից ուղղանկյուն հորինվածքով, վերին մասում ինքնատիպ քուղով պսակված և պատվանդանի վրա տեղադրված կոթողներ են։
8) Խաչքարի կենտրոնը կազմող խաչը Աստվածաբան մեկնիչները համարել են Երուսաղեմի Սուրբ տաճարի խորհրդապատկերը։

59 **Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու վերաբերյալ ստորև բերված պնդումներից որո՞նք են ճիշտ.**

1) Սուրբ Խաչ եկեղեցու ներսում, արևելյան պատին գտնվում է Գագիկ Արծրունու մոր, կնոջ և դստեր որմնանկարները։
2) Սուրբ Խաչ եկեղեցու ներսում, խորանի վերևի հատվածում 12 առաքյալների խորաքանդակներն են, իսկ արևմտյան կողմում՝ «Ադամի արարումից արտաքսում» որմնանկարը։
3) Սուրբ Խաչը 927-1915 թթ. եղել է Աղթամարի կաթողիկոսության կենտրոնը։
4) Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին կատուցվել է 915-921 թթ. Գագիկ Արծրունի թագավորի հանձնարարությամբ։
5) Սուրբ Խաչը քառախորան, խաչաձև գմբեթավոր կառուցվածքով եկեղեցի է։
6) Տրդատ ճարտարապետը Սուրբ Խաչ եկեղեցու հարևանությամբ կառուցել է մի քանի եկեղեցիներ ևս, որոնք սակայն չեն պահպանվել։
7) Սուրբ Խաչ եկեղեցու արտաքին պատերը զարդարված են վեց հորիզոնական շարք կազմող զարդաքանդակներով։
8) Սուրբ Խաչ եկեղեցու արտաքին պատերից մեկի վրա պատկերված է Գագիկ Արծրունի թագավորը՝ եկեղեցու մանրակերտը ձեռքին, կողքին՝ Հիսուս Քրիստոսը։

60 **Հոգևոր բարեպաշտական արարողությունների և սովորույթների վերաբերյալ ստորև բերված փաստարկներից որո՞նք են սխալ.**

1) Մոմավառությունը խորհրդանշում է խավար շրջապատի, դարձի չեկածների, հեթանոսների և անհավատների լուսավորումը, ինչպես նաև քրիստոնյայի լուսավոր հավատը աստվածային կրակով մեղքի մոխրացումը:
2) Խնկարկությունը խորհրդանշում է առ Աստված բարձրացող աղոթքն ու օրհնությունը:
3) Անդաստանը կատարվում է, երբ պատարագի ընթացքում ասվում է «Աստուծոյ երկրպագեսցուք»:
4) Տնօրհնեքի ժամանակ քահանան օրհնում է հացը, ջուրը, աղը և տան հիմքերը:
5) Մատաղն արգելված է Մեծ պահքի ժամանակ և պահոց օրերին:
6) Մոմավառությունը պատարագի և մյուս ծիսական արարողությունների ընթացքում Աստծուն երկրպագելու արարողությունն է:
7) Հոգեհանգստյան արարողության վերջում՝ «Քրիստոս որդի Աստուծոյ» աղոթքի ընթացքում, հիշատակվում են ննջեցյալների անունները:
8) Երկրպագությունը աշխարհի չորս ծագերի օրհնության արարողություն է:

61 **Տրված պնդումներից որո՞նք են սխալ.**

1) Բյուզանդական պատմագիր Պրոկոպիոս Կեսարացին գրում է. «Բյուզանդիան պարտական էր Հայաստանին հրաշալի զինվորներով, քանի որ X դարում հայկական ջոկատները բյուզանդական բանակի լավագույն զորամասերն էին համարվում»:
2) Մխիթար Գոշը գրել է, որ թագավորներն ու իշխանները հարկերը պետք է արդարությամբ վերցնեն, որովհետև «յԱստուծոյ կարգեցան ի պահպանութիւն եւ ի փրկութիւն աշխարհի եւ ոչ ի կործանումն».
3) Փավստոս Բուզանդը Հայաստանն անվանել է. «հայոց լեզվի Թորգոմական աշխարհ»:
4) Հովհաննես Գ. Օձնեցի կաթողիկոսի պատվերով Անանիա վարդապետ Սանահնեցին գրել է «Խոսք հակաճառության ընդդեմ երկաբնակների» ճառը:
5) Եղիշեն իր աշխատության մեջ գրել է, որ բյուզանդական կայսրերն իրենց թիկնազորի «ընտրության ժամանակ նկատի ունեին մարդկանց արժանիքները և հայերին էին տալիս նախապատվությունը»:
6) «Եղծ աղանդոց» աշխատության մեջ Դավիթ Անհաղթը գրել է. «Լավ է մաքուր մտքով քնել, քան պիղծ խորհրդով աղոթել և իզուր չարչարվել»:
7) Մովսես Կաղանկատվացու վկայության համաձայն Վաչագան Բարեպաշտ թագավորը տարվա օրերի թվով եկեղեցիներ է կառուցել:
8) Ըստ Գրիգոր Տաթևացու աղոթքի սրբությունները երեքն են՝ սրտի, լեզվի և ձեռքերի, քանզի աղոթքը նրանց միջոցով է կատարվում:

62 **Թվարկվածներից որո՞նք Հայ Առաքելական Եկեղեցու նվիրապետական աթոռներից չեն.**

1) Զմմառի կաթողիկոսություն
2) Սսի կաթողիկոսություն
3) Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքություն
4) Երուսաղեմի հայոց պատրիարքություն
5) Հոնիի կաթողիկոսություն
6) Գանձասարի կաթողիկոսություն
7) Մարաշի կաթողիկոսություն
8) Սյունիքի հայոց պատրիարքություն

63 **Գտնել ճիշտ պատասխանները.**
Գարեգին Ա. կաթողիկոսի գործունեության արդյունքում՝

1) Մայր Աթոռին վերադարձվեց ազգային նշանավոր բարերար Ալեք Մանուկյանի նվիրատվությամբ կառուցված Էջմիածնի հոգևոր ճեմարանի նոր մասնաշենքը, իսկ հին վեհարանն իր Ծաղկյա դահլիճով, վերածվեց թանգարանի:
2) ՀՀ զինված ուժերում ստեղծվեց հոգևոր ծառայություն, որը գլխավորում էր ՀՀ զինված ուժերի հոգևոր առաջնորդը:
3) Ամբողջությամբ վերակառուցվեցին Նորավանքի, Գորիսի, Արենիի, Սևանա կղզու եկեղեցիները և այլն:
4) Երևանի պետական համալսարանում հիմնվեց Աստվածաբանության ֆակուլտետ:
5) Վերաբացվեց Սևանի դպրանոցը:
6) ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրվեց, որ Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու որպես՝ ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում:
7) Կազմակերպվեց հայոց մկրտության 1700-ամյակին նվիրված «Հռոմ-Հայասատան» ցուցահանդեսը:
8) Հաստատվեց «Ներքին թեմերի եկեղեցական կանոնադրությունը»:

64 **Քրիստոնեության ամրապնդման և հոգևոր կյանքի վերափոխման նպատակով ի՞նչ որոշումներ ընդունվեցին Աղվենի ժողովում.**

1) Սահմանվեց եկեղեցի հաճախելու կարգը:
2) Ճգնավորական շարժումը հովանավորելու համար որոշում ընդունվեց հիմնել մոտ երեք տասնյակ վանքեր և կուսանոցներ:
3) Արգելվեց մահացածների վրա անպարկեշտ լացուկոծ անելը:
4) Արգելվեց մերձավոր ազգականների միջև ամուսնությունը:
5) Արգելվեցին կախարդությունները:
6) Ամուսնություններն ամրապնդելու նպատակով սահմանվեցին 20 կանոններ:
7) Ծառաների և իրեց ենթակաների հանդեպ գթասիրտ լինելու և ընդհանրապես, նախարարներին աշխարհիկ պաշտոնների մեջ հմտանալու համար որոշվեց բացել հատուկ դպրոցներ:
8) Սահմանվեց բարեգործական հաստատությունների ծախսերը հոգալու կարգը:

65 **Գրիգոր Լուսավորչի կյանքի հետ կապ ունեցող իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Ս. Երրորդություն եկեղեցու կառուցումը Աշտիշատում
2) Թագավորական ընտանիքի, ավագանու անդամների մկրտությունը Արածանի գետում:
3) Գրիգորի նշանակումը արքունի քարտուղար
4) Քրիստոնեական եկեղեցիների և վկայարանների հիմնադրումը Բագրևանդում
5) Կեսարիա քաղաքում Գրիգորի ձեռնադրումը եպիսկոպոս
6) Նորակառույց Մայր տաճարի օծումը

66 **Եկեղեցիների անվանումները դասավորել ըստ դրանց կառուցման ժամանակագրական հաջորդականության.**

1) Սևանի կղզու Սուրբ Աստվածածին եկեղեցի
2) Զվարթնոցի տաճար
3) Անիի Մայր տաճար
4) Գանձասարի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցի
5) Վաղարշապատի Ս. Հռիփսիմե եկեղեցի
6) Կարսի Ս.Առաքելոց եկեղեցի

67 **Եկեղեցական ժողովները դասավորել ըստ դրանց գումարման ժամանակագրական հաջորդականության.**

1) Կ.Պոլսի տիեզերական ժողով
2) Արտաշատի եկեղեցական ժողով
3) Նիկեայի տիեզերական ժողով
4) Շիրակավանի եկեղեցական ժողով
5) Շահապիվանի եկեղեցական ժողով
6) Դվինի առաջին եկեղեցական ժողով
7) Եփեսոսի տիեզերական ժողով

68 **Հայ նշանավոր աստվածաբան փիլիսոփաների անունները դասավորել ըստ նրանց գործունեության ժամանակագրական հաջորդականության.**

1) Գրիգոր Նարեկացի
2) Անանիա Շիրակացի
3) Գրիգոր Տաթևացի
4) Եզնիկ Կողբացի
5) Հովհան Օձնեցի
6) Դավիթ Անհաղթ
7) Պարույր Հայկազն

69 **Հոգևոր կենտրոնի անունը համապատասխանեցնել գավառի անվանը.**

ա) Արշարունիք
բ) Շիրակ
գ) Կարին
դ) Խաչեն
ե) Վայոց ձոր
զ) Արտազ
է) Ռշտունիք

1) Կամրջաձորի վանք
2) Գանձասարի վանք
3) Նարեկավանք
4) Գետիկի վանք
5) Դպրեվանք
6) Հնձուց վանք
7) Ցախաց քարի վանք
8) Ս. Թադեի վանք

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է

70 **Կատարել համապատասխանեցում.**

ա) Նաղաշ Հովնաթան
բ) Ս. Կյուրեղ Երուսաղեմցի
գ) Սենեկա
դ) Իմանուիլ Կանտ
ե) Եզնիկ Կողբացի
զ) Լեոնարդո դա Վինչի
է) Հովհաննես Առաքյալ

1) Մեղք է և հեշտ, գործել չարիք
Վարձք և դժվար՝ գործել բարիք:
2) «Ընչասիրությունը զուգակից է կռապաշտության»:
3) «Ով առաքինություն է ցանում, նա փառք է հնձում»:
4) «Շնորհ տալն Աստծու գործն է, այն պահելն ու պահպանելը՝ քոնը»:
5) «Սկզբում բարի բարքեր, նոր միայն իմաստություն, որովհետև առանց առաջինի չի կարող լինել երկրորդը»:
6) «Բարոյական լինելու համար միայն խելամտությունը շատ քիչ է»:
7) «Ով սիրո մեջ է ապրում, բնակվում է Աստծու մեջ, և Աստված բնակվում է նրա մեջ»:
8) «Առաքինությունից ավելի հարուստ ժառանգություն չկա»:

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է